ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎ

Աննա Մկրտչյան
ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

Դեռևս հռոմեական իրավունքում մասնավոր իրավահարաբերությունների շրջանակներում իրավունքների պաշտպանության համար նախատեսված էին որոշակի ընթացակարգեր, սակայն իրավունքների պաշտպանությունը որպես առանձին կատեգորիա ամրագրված չէր: Այնուամենայնիվ, այնտեղ առկա էին քաղաքացիական իրավունքի սուբյեկտների իրավունքների պաշտպանության ինստիտուտներ՝ օրինական հայցեր, ինքնադատաստան, պրետորական իրավունք[1] և այլն:

«12 աղյուսակների օրենքում» (Leges duodecim tabularum), պարտավորությունների չկատարման համար նախատեսվում էին պատասխանատվության որոշակի միջոցներ[2], որոնք կարող ենք համարել իրավունքների պաշտպանության յուրօրինակ մեխանիզմներ: Դրանք իրավունքների պաշտպանությանն ուղղված պարզագույն տեսակներ էին, որոնք ունեին խիստ ձևական բնույթ[3]: Իհարկե, այս կատեգորիաները միանշանակ չենք կարող նույնացնել «իրավունքի պաշտպանության ձևերի[4]» ներկայիս իրավական մտքի ընկալման հետ: Սակայն հռոմեական իրավունքում առկա իրավունքի պաշտպանության ձևերը մայրցամաքային իրավունքում իրավունքի պաշտպանության քաղաքացիաիրավական ինստիտուտի ձևավորման հիմք են դարձել:

Իրավունքի ինքնապաշտապանությունը չափազանց ընդգրկուն ինստիտուտ է, որը մարդու բնական իրավունքների հետ[5] կազմում է մարդկային բանականության մաս: Իրավունքի գործառույթը այս դեպքում պիտի լինի ինքնապաշտպանության՝ որպես իրավունքի պաշտպանության ձևի կանոնակարգումը, թույլատրելի շրջանակների սահմանումը: Միկշիսի կարծիքով՝ ինքնապաշտպանության իրավական հենքը, դրա անօտարելի լինելն է[6], որը ամենաէական բնութագրիչներից մեկն է: Քննարկվող հարցի վերաբերյալ գրեթե համանման մոտեցում է ցուցաբերում գիտնական Կարխալյովը[7]: Նա իրավամտածողության մեջ ներմուծեց «ինքնապաշտպանության սուբյեկտիվ իրավունք» եզրույթը:

---

[1] Տե՛ս Общая теория права. Вып. 1-4, Издание Бр. Башмаковых, 1910-1912., М., էջ 206:
[2] Տե՛ս Fundamentals of Roman Private Law, 2012, 12th edition, George Mousourakis, University of Auckland, New Zealand Faculty of Law, էջ 21:
[3] Օրինակ՝ հստակ նախատեսված է, որ անձին արմավենու ճյուղով հարվածելու դեպքում վճարվում է որոշակի գումար որպես փոխհատուցում: Ինքնակամ չկատարելու դեպքում շահագրգիռ անձը դիմում էր հանրային իշխանության ներակայացուցչին՝դատարանին, որն էլ ապահովվում էր վճարումը:
[4] Տե՛ս Textbook on Roman Law, Fifth edition Paul de Plesis, Borkowski Textbook, published 23 April 2015, Oxford University press, էջ 75, http://books.google.am/books?id=nKPKBwAAQBAJpg=PA25source=gbstoc:
[5] Տե՛ս **Г.Ф. Шершеневич**, Общая теория права, М., 1980, էջ 102-103:
[6] Տե՛ս **Д. В. Микшис**, Гражданское правоотношение, М., 2008, էջ 31:
[7] Տե՛ս **Е. Б. Казаков**, Охранительное грждaнское правоотношение, М., 2006, էջ 131-138:

Ինքնապաշտպանության ինստիտուտը՝ որպես քաղաքացիաիրավական վարքագծի դրսևորման ձև, համարվում է սուբյեկտիվ իրավունք[1], որի ժամանակ իրավահարաբերության մասնակիցները տարանջատվում են պասիվ և ակտիվ գործողություններ ձեռնարկողների[2]: Իրավունքի ինքնապաշտպանությունը համարվում է պաշտպանության ձևերից[3] պարզագույնը, որի կիրառությունը պայմանավորված է միայն իրավունքի սուբյեկտի կամարտահայտությամբ:

Քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակցի մոտ կամքը ձևավորվում է սուբյեկտիվ և օբյեկտիվ բազմաթիվ հանգամանքների համադրությամբ: Այդուհանդերձ, տարաբնույթ հանգամանքների վերջնակետը իրավահարաբերությունների առաջացման պատճառ դարձած նպատակին հասնելն է:

Իրավունքի ինքնապաշտպանությունը իր ուրույն դերն ու նշանակությունը ունի քաղաքացիական իրավահարաբերությունների կարգավորման առումով: Այն ունի թե՛ կանխարգելիչ, թե՛ վերականգնող բնույթ[4]: Սակայն, այնուամենայնիվ, իրավունքի ինքնապաշտպանության կարևոր հատկանիշներից է դրա օպերատիվ ազդեցությունը իրավահարաբերությունների բնականոն ընթացքն ապահովելու կամ վերականգնելու համար[5]:

Իրավագետ Գ. Դերնբուրգի կարծիքով՝ հենց իրավունքի ինքնապաշտպանությունն է ամենաարագ և ազդեցիկ միջոցներից մեկը՝ կանխելու վրա հասնող անարդարությունը[6]: Համաձայնվելով, գիտնականի հետ՝ կարծում ենք, որ քաղաքացիական հարաբերություններում ինքնապաշտպանության արդյունավետությունը պայմանավորված է նաև դրա համեմատական ինքնուրույնությամբ օժտված լինելու հանգամանքով: Այսինքն, իրավունքի խախտման արձանագրումը կամ դրա ճանաչումը որևէ իրավասու մարմնի կողմից որպես ինքնապաշտպանության կիրառելիության պայման չի դիտվում: Բավական է միայն իրավունքի սուբյեկտի մոտ իր սուբյեկտիվ իրավունքի խախտման փաստի գիտակցումը:

Մինչև ժամանակակից «իրավունքի ինքնապաշտպանության» եզրութային ընկալումը իրավագետները ինքնապաշտպանությունը բաժանում էին երկու տեսակի՝ ինքնապաշտպանություն[7] (self-defense, самообарона) և ինքնադատաստան (lynching, самоуправство): Ինքնապաշտպանությունը դիտարկվում էր որպես նպատակաուղղված գործողությունների համալիր, որը միտված էր պաշտպանելու անձի իրավունքները երրորդ անձանց ոտնձգությունից[8]: Ինքնադատաստանը կամայական գործողություն էր՝ ուղղված իրավունքի մեկ այլ սուբյեկտի դեմ սեփական շահերի իրականացման և/կամ պաշտպանության համար[9]: Հիմնական տարբերությունը երկու հասկացությունների միջև պայմանավորված էր մեկ կարևոր հատկանիշով՝ հակահիրավական լինելու կամ չլինելու փաստակազմով: Այսպիսով, իրավուն-

---

[1] Տե՛ս **Մ. Стасюлевич**, Система гражданского право. Т. 1., М., 1894, էջ 190:

[2] Տե՛ս **Մ. Карпов**, Гражданско-правовые меры оперативного воздействия., М., 2004, էջ 15:

[3] Իրավունքի պաշտպանության ձև հասկացությունը օգտագործված է պայմանական, քանի որ իրավունքի դոկտրինում հստակ տեսակետ չկա ինքնապաշտպանության՝ որպես իրավունքի ձևի կամ եղանակի վերաբերյալ:

[4] Տե՛ս նույն տեղում:

[5] Տե՛ս **Գ. Дернбург**, Система гражданского право, СПБ., 1995 էջ 342:

[6] Տե՛ս նույն տեղում:

[7] Տե՛ս Black's Law Dictionary, Thomson Reuters, 2009թ., http://www.republicsg.info/Dictionaries/2004_Black%27s-Law-Dictionary-Edition-8.pdf:

[8] Ոտնձգությունը ոչ միայն անձի ֆիզիկական կամ հոգեբանական անձեռնմխելիությանն ուղղված վարքագիծ է, այլև օրենքով կամ պայմանագրով սահմանված պարտավորությունների չկատարում կամ ոչ պատշաճ կատարում:

[9] Գրիբանովի կարծիքը տե՛ս **Е. Б Казаков**, Самозащита как юридическое средство: проблемы теории и практика, М., 2006, էջ 10:

քի ինքնապաշտպանությունը դիտվում էր որպես օրինական վարքագիծ, իսկ ինքնադատաստանը՝ ընդհակառակը:

Այժմ անդրադառնանք խնդրահարույց հարցերին, որոնցից կարևորը քաղաքացիական ինքնապաշտապության դիմած անձի վարքագծի բնույթի բացահայտումն է: Վարքագծի գիտակցվածության բնույթը անձի սուբյեկտիվ ընկալման բաղկացուցիչ մասն է[1], որը անհատի սոցիալական կարևորագույն բնութագրիչն է[2]:

Քաղաքացիաիրավական ինքնապաշտպանության վերաբերյալ տեսակետները կարող ենք բաժանել երկու հիմնական խմբի:

Առաջին խումբ իրավաբան-տեսաբանների (Միշկիս Դ. Վ., Կազակով Ե. Բ., Դենիսով Յու. Ա.) կարծիքը հանգում է նրան, որ քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության ոլորտում կարևոր են փաստացի կատարված գործողությունները (դրանց իրավական/հակաիրավական բնույթը): Մյուսները (Եմոմ Վ. Ս., Կարպով Մ. Ս., Կլեյ Ն. Ի.), ընդհակառակը, կարծում են, որ կարևորը արարքի իրավական բնույթի ապահովումն է, իրավահարաբերությունների մասնակիցների մոտ նման կամարտահայտման փաստով: Այսպես, անձի փաստական և իրավական գործողությունները կամարտահայտման պահից դիտվում են ինքնապաշտպանություն, որոնք իրականացվել են բացառապես իր ուժերով՝ առանց պետական համակարգի մարմիններին դիմելու:

Գրիբանովի կարծիքով, իրավունքի ինքնապաշտպանությունը իրավունքի սուբյեկտի կողմից դրսևորած համաչափ վարքագիծն է՝ մինչև իրավախախտումը առկա իրավիճակի վերականգնման նպատակով, ի պաշտպանություն իր օրինական շահերի և իրավունքների է: Գրիբանովի հետ համակարծիք են Եմոմը, Կարպովը, Կլեյնը, որոնք գտնում են, որ քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության ինստիտուտը կիրառելի է միայն արտապայմանագրային (դելիկտային) պարտավորությունների շրջանակներում[3]:

Ցիվիլիստների մեծամասնությունը չի կիսում այս կարծիքը՝ գտնելով, որ քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակիցները կարող են իրականացնել ինչպես փաստական, այնպես էլ իրավական գործողություններ: Այս տեսակետին են հարում Բասինը, Վլասովը, Ավերդլիկը, Ստրաունինգը և այլք[4]: Վերջիններս արգելք չեն տեսնում պայմանագրային պարտավորություններից բխող գործողություններն իրավունքների ինքնպաշտպանության եղանակ դիտելու հարցում[5]:

Իրավունքի ինքնապաշտպանության ներկայիս ընկալման տեսանկյունից իրավական դոկտրինում բավական մեծ ներդրում ունի գիտնական Գրիբանովը: Նա սահմանեց իրավունքի ինքնապաշտպանության հասկացությունը՝ուրվագծելով դրա հատկանիշները: Այսպես, իրավունքի ինքնապաշտպանությունը բացարձակ իրավունք է, որն ուղղված է իրավունքի սուբյեկտի կողմից իր իրավունքների պաշտպանության համար երրորդ անձանց ներկայացվող օրինական պահանջների հիման վրա՝ ապահովելու օրենքով կամ պայմանագրով նախատեսված պարտականությունների կատարումը[6]: Հասկացությունը վերլուծելով՝ մենք առանձնացրել ենք հետևյալ բնորոշ հատկանիշները՝

ա) իրավունքի ինքնապաշտպանությունը բացարձակ իրավունք է,

---

[1] Տե՛ս Raymond Wacks, Understanding Jurisprudence, Second edition, Oxford University press, 2009:

[2] Տե՛ս **Ա. Վաղարշյան**, Պետության և իրավունքի տեսություն, մաս 2-րդ, Երևան 2011, էջ 324:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Տե՛ս Advanced introduction to Private law, **Jan M. Smith**, Maastricht University, the Netherlands 2016, էջ 144:

[5] Տե՛ս նույն տեղում:

[6] Գրիբանովի կարծիքը տե՛ս **Е. Б Казаков**, Самозащита как юридическое средство: проблемы теории и практика, 2006, էջ 10:

բ) այն հիմնված է օրինական վարքագծի վրա,

գ) այն ուղղված է օրենքով կամ պայմանագրով նախատեսված պարտակա-
նությունների պատշաճ կատարմանը:

Իրավունքների ինքնապաշտպանությունը քաղաքացիաիրավական ամրագ-
րում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 16-րդ հոդվա-
ծը[1], համաձայն որի. «Անձն ունի օրենքով չարգելված բոլոր եղանակներով իր քա-
ղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության իրավունք: Ինքնապաշտ-
պանության եղանակները պետք է համաչափ լինեն խախտմանը և դուրս չգան խա-
փանման համար անհրաժեշտ գործողությունների սահմաններից»: Օրենսգրքում
տեղ գտած բնորոշումից առանձնացրել ենք հետևյալ վավերապայմանները.

ա) իրավունքի ինքնապաշտպանությունը պիտի ուղղված լինի քաղաքացիա-
կան իրավունքների պաշտպանությանը,

բ) քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանությունը պիտի իրակա-
նացվի օրենքով չարգելված եղանակներով,

գ) իրավունքի ինքնապաշտպանության ընտրված եղանակը պիտի համաչափ
լինի կատարված խախտմանը և դուրս չգա անհրաժեշտ գործողություններ իրակա-
նացնելու սահմաններից:

Գիտատեսական գրականությունում ինքնապաշտպանության միջոց կամ ձև
լինելու վերաբերյալ քննարկումները բազմաթիվ են: Այս հարցի պատասխանը չի
տալիս նաև օրենսդրական ամրագրումը, քանի որ քաղաքացիական օրենսդրութ-
յամբ ամրագրված հասկացության տրամաբանությունը թույլ չի տալիս բխեցնել և
հիմնավորել ինքնապաշտպանության՝ որպես իրավունքի պաշտպանության ձև կամ
միջոց լինելու հանգամանքը: Մասնավորապես, քաղաքացիական օրենսգիրքը,
դրույթներից մեկում ամրագրելով ինքնապաշտպանությունը որպես պաշտպանութ-
յան եղանակ, մեկ այլ դրույթում խոսում է ինքնապաշտպանության եղանակների
մասին: Ակնհայտ է, որ քաղաքացիական օրենսգրքի դրույթները միասնական չեն և
որոշ դեպքերում անգամ իրարամերժ են: Ստացվում է, որ ինքնապաշտպանությու-
նը, լինելով եղանակ ունի նաև եղանակներ:

Քաղաքացիական օրենսգրքի մեկ այլ հոդվածում՝ «Քաղաքացիական իրա-
վունքների պաշտպանության եղանակները» վերտառությամբ, խոսվում է իրավուն-
քի պաշտպանության եղանակների մասին և 8-րդ կետում ամրագրում նաև իրա-
վունքի ինքնապաշտպանությունը: Հարց է առաջանում՝ արդյոք օրենսդրի կողմից
հստակ տարանջատված են պաշտպանության եղանակ և ձև եզրույթները, թե
դրանց որևէ առանձնահատուկ եզրութաբանական նշանակություն չի տրվել: Օ-
րենսդրի որդեգրված մոտեցումից հստակ չի բխում, որ ինքնապաշտպանությունը
քաղաքացիական իրավունքի պաշտպանության ձև է, որն իրականացվում է օրեն-
քով չարգելված բոլոր հնարավոր եղանակներով: Ինքնապաշտպանությունը իր
հերթին ունի նաև հնարքների, եղանակների, միջոցների համակարգ, որոնք իրա-
վունքի տեսանկյունից կարգավորման առարկա են:

Այս տարակարծությունը առկա է նաև քաղաքացիական իրավունքի տեսության
մեջ[2]:

Խնդիրն ավելի ամբողջական պատկերացնելու համար կարևոր է տալ նաև այն
հարցի պատասխանը, թե արդյոք իրավունքի ինքնապաշտպանությունը պարունա-
կում է փաստացի կատարվող գործողություններ[3], որոնք ոչ մի դեպքում չեն կարող
իրավական ամրագրում ստանալ, թե այն նաև կարող է ունենալ ուղղորդված գոր-

---

[1] Տե՛ս ՀՀՊՏ 1998.08.10/17(50):

[2] Տե՛ս **С. Н. Веретенникова**, Система гражданского право, М., 2002, էջ 109-111:

[3] Տե՛ս **Д. В. Микшис**, Система гражданского право, Тюмень, 2006, էջ 42-44:

ծողություններ[1], որոնք պիտի սահմանվեն և սահմանափակվեն օրենսդրական ակտերով:

Վերետենիկովի կարծիքով՝ իրավունքի ինքնապաշտպանությունը սուբյեկտիվ իրավունք է՝ ընդգրկված քաղաքացիական իրավունքի շրջանակներում, որը թույլ է տալիս քաղաքացիական իրավահարաբերության մասնակիցներին ինքնուրույն գործողություններով նպատակաուղղված ազդեցություն ունենալ իրենց օրինական շահերի և իրավունքների պաշտպանության և իրականացման վրա[2]: Գրեթե նույն մոտեցումն է ցուցաբերել իրավաբան-տեսաբան Միկշինը: Նրա տեսության հիմնաքարերից մեկն այն է, որ ինքնապաշտպանության գործառույթի վերլուծությունը ցույց է տալիս դրա՝ իրավունքի պաշտպանության ձև լինելու հանգամանքը:

Կազակովը նշում է, որ ինքնապաշտպանությունը՝ որպես քաղաքացիական իրավունքի եզրույթ, դասվում է իրավունքի միջոցների, եղանակների շարքին: Նա այն համարում է իրավունքի յուրատիպ միջոց, որը հնարավորություն է տալիս անձին, առանց պետական կամ այլ մարմիններին դիմելու իրականացնել իր կամահայտնությամբ ծագած իրավահարաբերության առաջացմանն ուղղված նպատակները[3]:

Տեսական գրականության մեջ իրավունքների ինքնապաշտպանության բազմաբնույթ վեճերի հետ մեկտեղ տեղ է գտել նաև ինքնապաշտպանության ինստիտուտի պաշտպանության ձևը և միջոցը տարանջատելու հանգամանքը: Առանց այդ իրավական երևույթի գիտագործնական համալիր հետազոտության, ինչն անհրաժշետ է ոչ միայն դրա նշանակությունը պատկերացնելու, այլև ձևավորման առավել նախընտրելի ուղիներ բացահայտելու ու կիրառելու համար, հնարավոր չէ ապահովել ինչպես իրավաստեղծ բնականոն գործունեություն, այնպես էլ իրավաչափ իրավակիրառ պրակտիկա:

Բազմաթիվ հիմնավորումներ կան թե՛ ինքնապաշտպանությունը որպես միջոց, թե՛ պաշտպանության ձև դիտելու հարցում: Ցանկանում ենք շեշտել այն հանգամանքը, որ քննարկվող հիմնախնդիրը կարևորվում է տեսական դատողությունների շրջանակներում, սակայն անտեսել այն, որ օրենսդրական լիարժեք ամրագրման համար անհրաժեշտ է տեսական ճիշտ հենք, հնարավոր չէ: Գործնական առումով ինստիտուտի կենսունակության ապահովման համար անհրաժեշտ է ճիշտ ծավալով օրենսդրական դրույթների առկայություն:

Իրավունքների ինքնապաշտպանության ինստիտուտի կարգավիճակի մասին ճշգրիտ ու ամբողջական եզրահանգման հասնելու համար կարևորում ենք տեսական անդրադարձը: Իրավունքի տեսաբանները «ձևի», «միջոցի» իրավական տարանջատման հարցում միակարծիք չեն:

Իրավունքի «ձև» և «միջոց» եզրաբանական տարբերություններն ուսումնասիրելու ենք երկու իմացաբանական ասպեկտներով՝ ստուգաբանական և փիլիսոփայական:

Բացատրական բառարաններում ձև, միջոց բառին որպես հոմանիշ օգտագործվում է նաև եղանակ և հնարք տերմինները, սակայն ոչ առաջնային իմաստով: Ձևը որևէ բանի կերպ, տեսակ, կառուցվածք է, որի բնույթը պայմանավորված է բովանդակությամբ: Միջոցը մատնաշում է որևէ բան, որի օգնությամբ՝ շնորհիվ կատարվում է մի բան: Այն ցույց է տալիս, թե ինչ գործիքով, միջոցով է կատարվում գործողությունը: Եղանակ, հնարք բառերը, ներառված լինելով վեր քննարկված

---

[1] Վերետենիկովայի կարծիքը տե՛ս **С. Н. Веретенникова**, Система гражданского право, М., 2002, էջ 6-8:

[2] Տե՛ս Е. Б. Казаков, Самозащита как юридическое средство: проблемы теории и практика, 2006, էջ 10:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում:

հասկացությունների հոմանիշների թվում, լեզվական տեսանկյունից հստակության, տարանջատման խնդիր չեն առաջացնում: Այուամենայնիվ իրավական տերմինաբանության տեսանկյունից հստակությունը առավել քան անհրաժեշտ է:

Ճիշտ է, իրավունքի տեսության շրջանակներում «ձև» եզրույթը կիրառելի է միայն «իրավունքի ձևի» (ներքին և արտաքին դրսևորումների բնութագրիչ) բացահայտման շրջանակներում, սակայն որոշակի ընդհանրական ձևակերպումներով կփորձենք վեր հանել իրավունքում «ձև» եզրույթի կիրառելիությունը և արտահայտչամիջոցները, որոնք հնարավորություն կտան որոշ չափով լույս սփռել իրավական դոկտրինում «ձև» եզրույթի կիրառելիության և ընկալումների վրա:

Իրավունքը՝ որպես ամբողջական երևույթ, օբյեկտիվ իրականությունում կիրառելիությունն ապահովում է արտահայտման ձևերի միջոցով[1]՝ արտացոլելով իրավունքի կառուցվածքի բովանդակային առանձնահատկությունները: Իրավունքի ձև իրավական կատերգորիան լայն իմաստով ընդգրկում է ոչ իրավական իրողությունը՝ ներառելով իրավունքի բոլոր տարրերը, ինստիտուտները: «Իրավունքի ձև» եզրույթի տակ ենթադրվում է իրավունքի արտահայտման միջոցներ: Տեսական աղբյուրներում ձևը դիտարկվում է որպես իրավական երևույթի ներքին հատկանիշների արտացոլում:

«Իրավունքի ձև»-ի դեպքում շեշտադրումը կատարվում է իրավական երևույթի հատկանիշների վրա: Դա բավականին ընդգրկուն հասկացություն է և ներառում է իրավական համակարգում առկա որևէ իրավական ասպեկտի բովանդակային բոլոր տարրերը, բաղկացուցիչ բոլոր առանձնահատկությունները, իրավական մշակույթի հարաբերակցությունը և այլն[2]:

«Իրավունքի ձևը» ցույց է տալիս իրավունքի բովանդակությունը արտաքին աշխարհում[3]: Ըստ ընդունված տարանջատման՝ իրավունքի ձևի՝ որպես բարդ իրավական երևույթի բաղադրատարրերի ամբողջական բացահայտման համար այն բաժանում ենք երկու ասպեկտների՝ ներքին, որը կրողն է համարվում բովանդակային փաստակազմի, արտաքին, որը բովադակային առանձնահատկությունների արտացոլումն է օբյեկտիվ իրականությունում՝ որոշակի ձևով: Անվիճելի է, որ քաղաքացիական հարաբերություններում իրավունքի ինքնապաշտպանությունը առանձին իրավական ինստիտուտ է, որը օբյեկտիվ արտահայտչամիջոց է բովանդակային մաս կազմող իրավական գործողությունների: Եվ տեսական դատողությունները վերաբերելի են «իրավունքի ձև» եզրույթի օբյեկտիվ իրողությունում կիրառելի լինելու փաստով:

Այս եզրույթը փիլիսոփայական բառարաններում ունի հետևյալ ընկալումը: Ձևը ճանաչողության, բովանդակային ճշգրտում է, իրականության տվյալ բնագավառի ուսումնասիրվող օբյեկտների, երևույթների, գործընթացների որոշակի կառուցվածք, որոնք ունեն հարաբերականորեն կայուն բնույթ[4]: Դրա բովանդակային բացահայտումը տեղի է ունենում արձանագրման միջոցով: Փիլիսոփայական ասպեկտով ձևի մեջ են մտցվում առավելապես առարկայի կամ երևույթի կառուցվածքի հետազոտությանն ուղղված կանոնները, գործողությունները: Ձևը դիտարկվում է նաև որպես բովանդակության, սոցիալական ռեալությունների սկզբունքով կարգավորված համախումբ:

Պատկերն առավել ամբողջական տեսնելու համար հարկ ենք համարում անդրադառնալ եղանակ եզրույթի փիլիսփայական դիտարկմանը ևս. մեթոդ և եղանակ եզրույթները նույնօրինակ կիրառության շրջանակներում են և հանդես են գալիս որ-

---

[1] Տե՛ս **В.Л. Кулаков**, Теория государство и права, http://bookwu.net/book_teoriya-gosudarstva-i-prava_827/65_tema-16.-formy-prava-v.l.-kulakov

[2] Տե՛ս **Ю.И. Грецова**, Очерки теории и социологии права, М., 1996, էջ 166.

[3] Տե՛ս **Л. С. Явич**, Общая теория праяа, М., 1976, էջ 206:

[4] Տե՛ս Փիլիսոփայական բառարան, **Մ. Մ. Ռոզենտալի**, Երևան, 1975:

պես գործիք: Դրանք ամենաընդհանուր նշանակությամբ օգտագործվում են որպես նպատակին հասնելու որոշակի ձևով կարգավորված գործունեություն: Այսինքն, այն նպատակային նշանակության առավել սահմանափակ ուղղվածություն և գործառույթներ ունի, քան ձևը՝ որպես որոշակի ամբողջություն արտացոլող երևույթ:

Չևական տրամաբանության տեսանկյունից ինքնապաշտպանության ինստիտուտը որպես պաշտպանության ձև դիտելու ուսումնասիրությունը (իրավունքի տեսության, փիլիսոփայության և լեզվական) թույլ է տալիս մեզ կատարել ենթադրություն, որ իրավունքի ինքնապաշտպանության առկայությունը քաղաքացիական իրավահարաբերություններում վկայում է, որ այն որոշակի հասարակական երևույթների կարգավորման օբյեկտիվ իրականությունում արտահայտման ձև է:

Այս ամենից հանգում ենք այն եզրակացության, որ քաղաքացիական հարաբերություններում իրավունքի ինքնապաշտպանությունը քաղաքացիական իրավունքների պաշտպանության ձև է:

Միաժամանակ հարկ է նշել, որ քաղաքացիական օրենսգրքում այն ներկայացվում է որպես քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակ այլ եղանակների շարքում: Փաստորեն օրենսդիրը չի առանձնացրել քաղաքացիական իրավունքների պաշտպանության ձևերն ու եղանակները և դրանք համակարգել է միայն որպես եղանակներ՝ տալով դրանց ընդհանուր դասակարգումը: Ամեն դեպքում ինքնապաշտպանությունը իրավունքի պաշտպանության ձև է և եղանակների շարքում այն նախատեսելը իրավաբովանդակային առումով ճիշտ չէ, մանավանդ այն պարագայում, որ քաղաքացիական օրենսգրքի 16-րդ հոդվածում խոսվում է իրավունքների ինքնապաշտպանությունը օրենքով չարգելված բոլոր եղանակներով իրականացնելու մասին: Նշվածը վկայում է այն մասին, որ «իրավունքի պաշտպանության ձև» և «իրավունքի պաշտպանության եղանակ» իրավական երևույթները քաղաքացիական օրենսգրքում պատշաճ իրավակարգավորման չեն ենթարկվել:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք եզրակացնել, որ անհրաժեշտ է համակարգային առումով վերանայել քաղաքացիական իրավունքների պաշտպանության ձևերի և եղանակների դասակարգումը՝ իրավունքների ինքնապաշտպանությունը նախատեսելով որպես քաղաքացիական իրավունքների պաշտպանության ձև՝ դրա իրավական բովանդակությունն օրենքում ճիշտ արտահայտելու նպատակով:

САМОЗАЩИТА КАК ФОРМА ЗАЩИТЫ ГРАЖДАНСКИХ ПРАВ

Анна Мкртчян
Аспирант кафедры гражданского права ЕГУ

Начиная с римского права, право защиты закреплено как возможное действие, направленное против различных посягательств. Основная цель сегодняшнего законадательства – гарантия прав самозащиты как законное действие в ряду гражданских прав. В статье не только отображены признаки самозащиты, но также дана их характеристика как института гражданского права. Таким образом институт самозащиты гражданских прав был определен как форма защиты гражданских прав.

SELF-PROTECTION AS A FORM OF PROTECTION OF CIVIL RIGHTS

Anna Mkrtchyan
PhD Student at the YSU Chair of Civil Law

Starting from Roman law, the right of protection was stated as a possible act against different type of violations. The main aim of nowadays legislation is to guarantee the right of self-protection as a legal action among other civil rights. Article highlights characters of self-protection, as well as define it as an institution in civil law. As a result, self-protection of civil rights has been viewed as a form of protection of civil rights.

Բանալի բառեր – *ինքնապաշտպանություն, քաղաքացիաիրավական պաշտպանության միջոցներ, իրավունքների ինքնապաշտպանության ձևեր, իրավունքների ինքնապաշտպանությունը մասնավոր իրավունքում*
Ключевые слова: *защита, самозащита, самозащита в гражданском праве, защита прав в частном праве*
Key words: *protection, self-protection, self-help in civil law, protection of rights in private law*